ՀԱԻԱՏՔ

Ա. ԳԼՈՒԽ

ԼԵՌՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Վարանդացին հեռու անցեալում և մեծ մասամբ այժմս էլ աստուածացրել է ամբողջ բնութիւնը և ծունր դրել նրա առաջ։ Քիրս լեռը իւր սպիտակափառ գագաթով նուիրական է եղել նրա համար. շատերը ծունր չոքած աղօթել են նրա առաջ։ Դեռ մինչև այժմս էլ Քիրսի աստուածացման վերաբերեալ աւանդութիւններ շրջում են ժողովրդի մէջ և լերան վերայ գտնուող բազմաթիւ ուխտատեղիները խլել են նրանից նրա աստուածացումը։ Խերխան գիւղի Ծծաքարի աւանդութեան մէջ *) թշուառ կինը Քիրսին է դիմում և խնդրում իրեն քար դարձնել, որ և կատարւում է։

Աշան գիւղի ցից քարը **) դարձեալ մի կին է եղել, որ աւազակներից հալածուած՝ խնդրել է Քիրսին և քար դարձել։

---

*) Տես երես 189.

**) Տես երես 193.